

մինչդեռ եթէ զլուխը չլինի մարմնի միութիւնը կկորցնէ հսկողութեան զիտարանը:

Ուրեմն կարճ՝ Հայաստանեայց Ս. Եկեղեցին մի մարմին է և նորա երկրաւոր զլուխն է ընդհանրական Կաթողիկոսը: պարզ է որ ոչ մի անգամ չի կարող իբրեւ ամբողջութեան մաս կառավարուիլ և զօրանալ եթէ նորա զեկավարն ու հրամանատարը շնորհաւանդն ու վերահսկողը զլուխը չէ:

Արդ՝ այսքան զիտողութիւնք այդ յօգուածների մասին բաւական համարելով՝ նկատենք ևս որ հետեւեալ յօգուածներում մի առմի որոշուելու են այն բացայայտ իրաւասութիւնք որոնք ձեռնադրութեամբ տրուում են եպիսկոպոսին, վարդապետին և քահանային՝ որոշ որոշ յիշատակուելով: * Այդ ամենն ուշագրութեան առնելուց զինի, կհամոզուինք որ յիշեալ եկեղեցականք այլ ևս չեն կարող ունենալ ուրիշ որ և իցէ իրաւասութիւն: Աստորում և նոցա իրաւանց ընդհանուր իրաւատէրն է Կաթողիկոսն, որ զլուխ է Հայաստանեայց Ս. Եկեղեցու և որի առաջ խոնարհում է ամենայն շնորհառու և հաւատացող: Վասնորոյ և Կաթողիկոսը Ս. Հոգու կատարեալ շնորհը վայելելով՝ օրհնում է Ս. միւռոնին ** որ նշան է շնորհաց իւղի և Ս. Հոգու իջման սրով Սծեալ Հայրապետը շնորհադրուում է իւր բոլոր հաւատացող որդիներին: Ինչպէս որ Կաթողիկոսը զլուխ է Եկեղեցու և օրհնող միւռոնի այնպէս էլ միւռոնն շնորհադրութեան և սրբադրութեան միջոցն և հիմունքն է:

(Հարունակելի)

Ա. ՏԵՐ-ՄԻՔԵԼԵԱՆ.

*. « Զկարգ եւ զաստիճան, զոր ունի զպիքն, լրմամբ ունի եւ սարկաւազն. քայց սարկաւազն զոր ինչ կարգ եւ աստիճան ունի, զպիքն ոչ ունի զամենայն: Նոյնպէս եւ սարկաւազն զոր ինչ կարգ ունի, լրմամբ ունի եւ քահանայն, քայց քահանայն զոր ինչ ունի, ոչ ունի սարկաւազն: Եւ այսպէս շունչեցեալ կարգս քահանային՝ զամենայն ունի լիովին եպիսկոպոսն. քայց շունչեցեալսն եպիսկոպոսն՝ լրմամբ ոչ ունի քահանայն: Նոյնպէս եւ եպիսկոպոսն ունեցեալ զկարգ եւ զաստիճանն լրմամբ ունի եւ Կաթողիկոսն, քայց զկարգ եւ զաստիճան Կաթողիկոսին ոչ կարէ ունիլ լրապէս եպիսկոպոսն: Սիմէոն Կաթողիկոս. Պարտավճար. ըստ Դիոնիսիոսի. Էջ. 316:

** Տես, Կանոնք. Ս. Սարկայ, Դ. Եովն. 1 մասութ. Թ. Սիւն Կաթողիկոսի, Ե.

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐԻՍՏԻԿՈՆ.



Նոյն հանուր քրիստոնէական եկեղեցիների կեանքից և Արարատի ընթերցողներին պարբերաբար տեղեկութիւններ տալու նպատակով՝ այս համարից իսկ սկսում ենք մի համառօտ քրոնիկոն կազմել բոլոր քրիստոնէայ եկեղեցիների կեանքի զլիսաւոր երևոյթների մասին:

Գիտութեան աղբիւրը ճանաչողութիւնն է. թող հայ ընթերցողները ծանօթութիւն ունենան ամբողջ քրիստոնէական աշխարհի մասին, որպէս զի վնահատել սովորեն մեր սուրբ և հնազոյն եկեղեցու արժանիքը:

ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Ի. ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՄԻՈՒԹԵԱՆ ԽՆԳԻՐԸ.

Անցնող տարուան ընթացքում պապական կամ կաթողիկ եկեղեցու մէջ կատարուած մեծագոյն գործն եղաւ Լեոն ԺԳ. պապի հրաւիրագիրը բոլոր արեւելեան եկեղեցիներին՝ և Վատիկանի ժողովը արեւելեան եկեղեցու հօռմէականի հետ միացնելու նպատակով:

Եւրոպայում այսօր երկու եկեղեցական մեծ ուղղութիւններ կան, մէկը կաթողիկական և միւսը բողոքական. Այս երկու եկեղեցիքն ևս հասել են իրենց ներքին զարգացման ծայրայեղ արտայայտութեան կէտին:

Կաթողիկութիւնը կենդրոնամէտ ուղղութեամբ ձգտում է միացնել բոլոր եկեղեցիները, մինչ դեռ բողոքականութիւնը կենդրոնախոյզ ուղղութեամբ հետ զհետէ հատուածների և նորանոր հերձուածների է բաժանուում:

Կաթողիկ եկեղեցին կենդրոնականութեան դիմելով հասել է այնտեղը, որ աստուածացիք է իւր կենդրոնական իշխանութիւնը, պապի անձնաւորութիւնը՝ ներքին զարգացման ընթացքում այս մեծագոյն անհեմք հեմութեան հասնելով. այժմեան պապականութիւնը, զիմում է մի նպատակակէտի—

ճանաչել տալու ամբողջ քրիստոնէական աշխարհին պայի անսխալականութեան վարդապետութիւնը (Dogme):

Այս նպատակով պարբերաբար ժողովներ են տեղի ունենում Հռովմում, որին մասնակցելու հրաւիրում են և ուրիշ եկեղեցիները: Մինչև այսօր այդ միաբանական ժողովները ոչ մի գործնական հետևանք չեն ունեցել և ոչ մի եկեղեցի իւր ինքնուրոյնութիւնը չէ զոհել պապական հաճոյքներին: Միութիւն և միացում ասելով հասկացում է երկու նոյնատեսակ իրերի բարդումն կամ գումարումը և ոչ մէկի ձուլումը միւսի մէջ:

Վաթուրիկ եկեղեցին միութիւն ասելով միշտ ձուլում է հասկացել և ձուլումն միւս եկեղեցիների իւր, կաթողիկէ եկեղեցու մէջ:

Միաբանական խնդիրը նոր չէ մեր եկեղեցու համար, թողնելով հնագոյն օրինակները, յիշենք այն շրջանը, որ սկսել է Վիլիկեան յարարերութիւնների օրից և հէնց առաջին խաչակրական պատերազմներից: Դարեր շարունակուող այդ միաբանական առաջարկութիւնները զբաղեցրել են մեր եկեղեցու հայրերին, որոնք կարողացել են հասկանալ այդ ձգտումների նպատակակէտն ու դէմ դնել փորձութիւններին:

Վերջին ժամանակներս, կրկին դիմումներ են եղած Հայաստանեայց եկեղեցուն, սակայն այդ դիմումներին մենք վերաբերուել ենք արժանի անտարբերութեամբ, չզլանալով միանգամայն և բանաւոր պատասխաններ, որ տուել են մեր եկեղեցու անուանի վարդապետները, եպիսկոպոսներ ու պատրիարքները: Միաբանական հրաւերների վերջին պատասխանն եղաւ Մայր Աթոռի հոգեւոյս գահակալի Մակար Ա. կոնդակը:

Հայաստանեայց ս. եկեղեցին միշտ կողմնակից է եղել եկեղեցիներին միութեան, սակայն միութեան ի քրիստոս և ոչ ի պապի Հռովմայ:

Քանի պապական եկեղեցին միութեան խնդիր ասելով կը հասկանայ պապի գերիշխանութեան ճանաչումը, նրա միաբանական ժողովները միշտ այնպէս անհետեանք կը մնան, ինչպէս ցարդ եղած բոլոր այդպիսի ժողովները:

2. ԶԻՆՈՅԻ ԳՐԻՍՏՈՂՆԱՆԵՐԻ ՀԱՆՈՒՄՆԵՐԸ

2ին—Ճափոնական պատերազմի հէնց առաջին օրից կատարի հալածանք է սկսուած քրիստոնեաների դէմ: Վաթուրիկ քարոզիչների եպիսկոպոս Միւտէլու գրած թղթակցութիւններից երևում է, որ 15.000 չինացի քրիստոնեաներ լնոնեն են ապաւինել, ուր մեծ ներուժիւն են կրում: Հալածիչ-

ները ոչ հասակ են խնայում և ոչ սեռ: Նրանց նպատակն է արմատախիլ անել քրիստոնէութիւնը 2ինաստանից:

ՅՈՒՆԱՅ ԿԱՄ ՕՐԹՈԴՈՔՍ ԵՎԵՂԵՑԻ:

1. Կ. ՊԱՆՍԻ ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԻՒՆԸ:

Այս աշնանը Կ. Պոլսի յունական պատրիարքարանն ամենից առաւել զբաղուած էր կրթական խնդրով:

Եայտնի է, որ կրթութեան դործը պատրիարքական թեմերում, մանաւանդ Կ. Պոլսի թեմում շատ յետ է, դպրոցականների ամբողջ թիւը այս թեմում 14.000 է, տղայ և աղջիկ, Հաշուելով թեմի բնակիչների թիւը 258.000, կրթութեան դիմողների 6%: Կաշմում, Կ. Պոլսի թեմի դպրոցական տեսուչ Կ. Գեւորգիէս վարդապետի հաշուի համաձայն 1892—94—ուսմ: տ: ընթացքում թեմի բոլոր դպրոցների թիւն եղել է 70, սրա մէջ հաշուելով և Խալիկի կղզու վաճառականական և աստուածաբանական դպրոցը, որ առ այժմ փակուած է: Տղայոց դպրոցների թիւն եղել է 41, իսկ աղջկանցը 29, տղայոց դպրոցներից 5 բարձրագոյն են, 14 միջին, 22 ժողովրդական, Աղջկանց դպրոցներից միայն երեքն են եղել միջին: Սրանց կից կան և 55 մանկական պարտէզներ:

Դպրոցական հաստատութիւնների մէջ դործ դըրուող ծրագիրն և ուսման աւանդելու եղանակը չէ համապատասխանում գիտութիւն արդի պահանջներին: Այս թեմերութեան առաջն առնելու համար կենդրոնական վարչութիւնը նոր ծրագիրներ մշակեց ժողովրդական և հոգեւոր դպրոցների համար: Այն ծրագիրը, որ մշակուած էր բարձրագոյն հոգեւոր կրթութեան համար՝ դեռ չիրագործուեց, որովհետեւ երկրաշարժի պատճառաւ այս տարի փակ մնաց Խալիկի կղզու հոգեւոր ձեմարանը:

Կ. Պոլսի յունական սինոդը խնդրել է կառավարութիւնից թոյլտուութիւն երկրաժարչից կործանուած եկեղեցական հիմնարկութիւնները վերանորոգելու հետ միասին և նպաստներ յոյն ժողովրդի համար, որ վնասուել է:

Յունաց պատրիարքին մեծ հոգսեր պատճառեց այս շրջանում և կառավարութեան այն հրամանը, որով պիտի դպրոցների մէջ մտցուէր տաճկերէն լեզուի դաստատուութիւնը իրրե պարտաւորիչ: Պատրիարքարանը նախ մերժեց այդ հրամանը, բայց յետոյ համաձայնել ստիպուեց, Այս համաձայնութեան հետևանքն եղաւ յունաց պատրիարք Նէոփիոս Ը. - ի հրաժարականը: Հոկտեմբերի 26-ին

երեկոյեան ժամերգութիւնից յետոյ սինոդի անգամ-
ները ներկայացրին պատրիարքին պատրաստի հրա-
ժարականն և ստիպեցին ստորագրել, Սինոդը դըժ-
գոհ էր, որ պատրիարքը ամեն անգամ համաձայ-
նութիւն կառավարութեան պահանջներին, Գլխո-
ւորում տաճկերէնի պարտաւորիչ դառնալու խնդի-
րըն էր հէնց, որ պատճառ էր եղել Նեոփիլոսի նա-
խորդ, Յովակիմ պատրիարքի հրաժարականին:

2. ՅՈՒՆԱՍՏԱՆ

Սեպտեմբեր ամսին տեղի ունեցաւ յունական
թագաւորութեան սինոդի նիստը, Սինոդը պնդելով
պահանջեց բոլոր թեմական աթոռների համար ե-
պիսկոպոսներ նշանակել, իսկ եկեղեցական գործե-
րի նախարարը մերժեց այդ առաջարկը կատարելու:

Եկեղեցական գործերի նախարարի նախագահու-
թեամբ ժողովներ տեղի ունեցան հոգևոր կրթու-
թեան գործը բարոյեցնելու համար, ժողովին մաս-
նակցում էին համալսարանի ուսուցչապետները, Ռի-
զարևի հոգևոր դպրոցի ծրագրի մասին խօսելով
նախագահ առաջարկեց հնգամեայ ուսման ընթաց-
քը դարձնել իննամեայ, դպրոցի սաները 5 տարի
սովորելուց յետոյ պէտք է 4 տարի ևս նոյն դպրո-
ցի մէջ մնան և համալսարանում Աստուածաբանու-
թիւն սովորեն, Այդ միջոցին դպրոցը պիտի վերա-
հասկէ իւր սաների բարոյականի վրայ, քարոզչու-
թեան վարժեցնէ և երաժշտութիւն ու երգեցողու-
թիւն ուսուցանէ, Համալսարան յաճախող սաները
պիտի հոգևորականի զգեստ կրեն, Ընթացքն աւար-
տողը պիտի իրաւունք ունենայ անմիջապէս կղերա-
կան դառնալու, Ուսման ծրագրի մէջ առաջարկուե-
ցաւ հետեւեալ փոփոխութիւնն անել, լատիներէն
դասական հնդինականի փոխարէն կարդացնել լա-
տին եկեղեցու հարց գրութեանն և զօրացնել յոյն
եկեղեցական հարց ուսումնասիրութիւնը:

3. ՌՈՒՍԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Ռուսաց եկեղեցական թերթերը ողբալով հանգուցե-
աւ խաղաղասէր Կայսեր, Աղէքսանդր Գ-ի, մահ-
ուան վրայ, մի առմի թուում են այն մեծամեծ բա-
րիքները՝ որ հանգուցեալ Կայսրը արեւ է օրթողոքս
եկեղեցու համար, «Церковный Вѣстник» թերթի
գեկտեմբերի համարներում առաջ են բերուած վի-
ճակագրական տեղեկութիւններ, որ ապացուցանում
են, թէ հանգուցեալ Կայսեր օրօք, ուսուցաց եկե-
ղեցին բարգաւաճել է, Այդ վիճակագրական տեղե-
կութիւնների հիման վրայ աւելացել են թէ եկե-
ղեցիների և թէ քահանաների թիւը:

Յիշեալ թերթը իրաւամբ շեշտում է, որ հան-

գուցեալ Կայսեր շնորհիւ բարոյեցուել է եկեղեցա-
կանութեան նիւթական վիճակը:

Աղէքսանդր Գ. Կայսեր ժամանակ ուսական քա-
րոզչութիւնը յառաջագիմել է արեւմտեան Ռուսաս-
տանում:

Նոյն թերթի մէջ յառաջ բերուած տեղեկու-
թիւններից երեւում են, որ Շուրջբալթեան գաւառ-
ների նորագործ օրթողոքների վիճակը գեո նախան-
ձելի չէ, շատ տեղ նորանք ոչ եկեղեցի, ոչ դպրոց
և ոչ իսկ սուրբ գրքեր ունեն, Այսպէս լատինների
քարոզիչն հազորդում է, որ ստիպուած է եղել ե-
կեղեցական պաշտօնը երբեմն մի լուսեռականի տա-
նը կամ մի գիւղական խրճիւթում կատարել:

Սեպտեմբերի 18-ին Քութայիսում բացուել
է մի նոր հոգևոր դպրոց (սեմինարիա):

1895 թ. տարեկան նախահաշուի մէջ 500,000
ռուբլի յաւելումն է առաջարկուած գիւղական և
քաղաքային քահանայական դասի պահպանութեան
համար և 250,000 ռուբլի հոգևոր դպրոցների բար-
ւոյեման համար:

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՔ.

1. ԱՆԳԼԻՍԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ.

Անգլիայում կրկին անգամ զարթնել է մի կրօ-
նական վիճաբանութիւն, որ քանիցս արդէն յա-
րուցուած է և գեո լուծուած չէ:

Անգլիական երիցութիւնը շատերը կանոնական
չեն համարում, որովհետեւ դա յաջորդաբար չէ շա-
րունակուում առաքեալներից, Այս առարկութեան
դէմ Անգլիացիք շատ են բողոքել և մանրազնին
գիտնական շարագրութիւններով հակառակն ապա-
ցուցել:

Վերջերս կարգեաւ Վոգհանը պապի էնցիկլի-
կայի (ընդհանրական) մասին արած բանախօսու-
թեան մէջ կրկին յարոյց այդ խնդիրը, Հիւանդ
խնդիրը, ինչպէս այդ կոչում են, բաւական յուզեց
մոքերն և առիթ տուաւ անթիւ ընդգիմախօսու-
թիւնների, որ գեո շարունակուում են:

Իւրաքանչիւր տարի հոկտեմբերին տեղի են ունե-
նում Անգլիայում « եկեղեցական համաժողո-
ղովներ », որ մեծ նշանակութիւն ունին երկրի կրօ-
նական զարգացման խնդրում, Այս տարի այդ ժողովը
տեղի ունեցաւ Լոնդոնի մերձակայքում: Էկստերում:

Ժողովին մասնակցում էին 25 եպիսկոպոս, շատ սարկաւազներ, կանոնիկոսներ և ուսուցչապետներ, մի խօսքով անգլիական եկեղեցու ամբողջ կազմը:

Համաժողովի ծրագիրը խիստ ընդարձակ էր, սկըսած դաւանաբանական խնդիրներից մինչև կեանքի ամենաՀասարակ երևոյթները խնդիրներ էին մատակարարել վիճարանութեան: Աչքի առաջ ունենալով չոր ժողովներին ունկնդիր էին լինում 3000 ժողովուրդ, չի կարելի ուրանալ այդ ժողովների բարոյական մեծ ազդեցութիւնը:

2. ԱՄԵՐԻԿԱ

Ամերիկայի միացեալ Նահանգներում ամենայն տարի աշնանը մի օր յատկացում է գոհարանութեան: Այդ օրը կոչւում է «օր գոհարանութեան» — Thanksgivingday, որ նախագահի հրովարտակով ամենայն տարի առանձնապէս նշանակում է: Ահա թէ ի՞նչ է ասում այժմեան նախագահ Վելվէնտը իւր այս տարուան հրովարտակով:

«Ամերիկայի ժողովուրդը պարտական է երախտագիտութեամբ գոհութիւն մատուցանել տիեզերքի վերին Տեսչութեան: Որը անցած տարուան ընթացքում բարի խնամք է ունեցել իւր վերայ, Հեզութեամբ և հաւատով պէտքէ աղօթեն Ամերիկացիք առ Հայրն ամենայն բարութեանց, որ նա անսպառ անէ իւր խնամքը: Բարեգործութեամբ պէտք է ողորմութիւն որոնեն նոքա բոլոր բարեաց և պարգևների Տուողից: Այսու ես Գրովեր Վելվէնտ, նախագահ Միացեալ Նահանգների, նշանակում եմ 29 նոյեմբերի իւրեւ օր աղօթից և գոհութեանց, որ պիտի պահեն և սրբադարձեն մեր երկրի բոլոր բնակիչները: Այդ օրը թող դադարեն բոլոր սովորական աշխատանքներն և գործերը: Երկրորդ լինինք Ամենակալ Աստուծուն գոհութիւն մատուցանել մեր ազգի պահպանութեան համար, մեզ հիւանդութիւններից և ախտներից ազատ պահելու: առատ հունձ պարգևելու: ազգային բարօրութիւն պարգևելու և ամենատեսակ բարգաւաճումն ունենալու: համար առաքինութեան և բանականութեան ծանապարհի վրայ: Գոհութեան աղօթքին կցենք և մեր խնդրածքը: որ այս բարիքներն ամենն էլ բազմապատկուեն: որպէս զի մեր ազգային խիղճը աւելի ևս զարթնի: Աստուծոյ ամենակարողութիւնը և բարութիւնը ծանաչելու և մեր ազգային կեանքի մէջ աւելի ևս պարզ տեսնելը ճշմարտութեան և առաքինութեան ուղին:»

ն. Բ.

ՊԱՏՄԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏԵՍԻՒ, ԵՆՈՎ, ԲԱՅ ԱՐԴԱՐՈՅՆ:



Երեցաւ ինձ այր մի յանդիման Լիւթանան լերինն ի վեցերորդ ժամուաւուն և տեսիլ նորա ի բոց հրոյ և ասէ ցիւս. ի միտ առ այր դու զոր պատմեմ քեզ զոր ինչ լուայ ի տեսանէ զօրութեանց և ես կացի զգիշերն ամենայն դէմ յանդիման լերինն յարեւելից կողմանէ և երեսը իմ ի ծովն արեւմտից յանդիման քրովքէին: Եւ ահա ի վերայ ծովուն արծուի մի սաւս և բարձրաթուիչ Ը. թեւք և Գ. գլուխք ի վերայ նորա և կայր ի վերայ ջուրց ծովուն և դիտէր ընդ հարաւ. և ծովն փրփրայր ի հողմոյն հարաւոյ և կուտակէր զալիւն ընկզմել զարծուին և բախէին ալիքն զթեւս նորա և ձայն ալեացն իրրեւ զձայն երկվարաց, անցելոց ի կողմ արեւելից հիւսիսոյ, Եւ ահա գլուխ վիշապի և աչք նորա Թ. ոտք նորա իրրեւ զմագիլս առիւծու և վազք նորա իրրեւ ընձու: Եւ հասանէր արծւոյն ի մէջ հողմոյն և ալեացն և ածեր զբերան իւր ի կըլանել զնա: Ծչէր արծուին առ բարձրեալն և ոչ լինէր լսելի աղաղակ նորա վասն որոյ բռնութեան իւրոյ, Դարձուցանէր արծուին զբերաս իւր ի փախուստ ի վերջին հիւսիսոյ և ոչ լինէր նմա հանգիստ անդ: Եւ վիշապն կլանէր զազգս ամենայն և կիզոյր որպէս հրով և ոչինչ գտանէր յորովայնի նորա և տիրէր ի վերայ երկրի Զ. Թ. իցս և Զ. որ լինի Դ. Զ. 1) ամ և ի կատարածի ժամանակի նորա եղև դարձ արծւոյն ի նոյն տեղի սաստիկ զօրութեամբ ընդդէմ վիշապին ի հարաւային հողմոյն. և կայր զլուխ վիշապին ի վերայ մոխրակոյտ հողոյ և կայր արծւին ի վերայ կառաց ճարմակ ձիոց և հասանէր առ վիշապն ի վերայ լերին մոխրակուտին. և հարկանէր զվիշապն սաստկութեամբ և ոչ գտանէր զօրութիւն վիշապին իրրեւ զառաջինն. և հոսէր զգըլուխ վիշապին ընդ ազգս ամենայն. և իջանէին ձիքն ճարմակքն ի մոխրակոյտն և հոսէին զնա. և ելանէր փոշին և ցանէր ընդ երկինս և ոչ էր լու: